

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը վարեց Տավուշի մարզի փորձնական կարգի քննարկումը 10.10.2014թ

Այսօր, Տավուշի մարզպետարանում, հերթական քննարկումն էր մարզի հանրակրթական դպրոցներում ներառական կրթության ներդրման, ընթացքի և դրա հետ կապված դասավանդման այլ առանձնահատկությունների վերաբերյալ: Քննարկումն անցկացրեց Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը, մասնակցում էին ՀՀ ԿԳՆ հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ Անահիտ Մուրադյանը, Երեխայի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի տնօրեն Վարդուհի Կատինյանը, «Հույսի կամուրջ» ՀԿ-ի նախագահ Սուսաննա Թադևոսյանը, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները և «Հույսի կամուրջ» ՀԿ-ի Տավուշի մարզի երեխայի զարգացման կենտրոնների ներկայացուցիչները: Քննարկման հիմնական թեման այս անգամ ներառական կրթության Տավուշի մարզի փորձնական կարգն էր: Այն ընդունվել է դեռևս 2011 թվականին, որի համաձայն կարգավորվում են մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության համար ուսումնական հաստատություններին պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման հետ կապված հիմնական հարաբերությունները: Սակայն փորձնական այդ կարգը գործում է միայն նախապես ցանկով հաստատված մարզի 14 դպրոցներում: Որպեսզի այն տարածվի նաև մյուս դպրոցներում, և այդ հաստատությունները նույնպես կարողանան ստանալ համապատասխան ֆինանսավորում, պետք է իրականացվի կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների գնահատում և վկայագրում: Յուրաքանչյուր կողմի կարծիքը վերլուծելով՝ Տավուշի մարզպետարանի, երեխայի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի և «Հույսի կամուրջ» ՀԿ-ի երեխայի զարգացման կենտրոնների հետ կոնկրետ խնդրով համատեղ, թիմային աշխատանքի պայմնավորվածությունն ձեռք բերվեց: Ուսումնասիրությունները կկատարվեն սկսած նույնօրը ամսից: Մինչև 2015 թվականի փետրվարի 15-ը կներկայացվի երեխաների թիվը, որպեսզի ֆինանսիստներն արդեն կարողանան կատարել նախնական հաշվարկները հաջորդ տարվա բյուջեի համար: Քննարկման ավարտին Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը շնորհակալություն հայտնեց արդյունավետ աշխատանքի համար և նշեց, որ նման քննարկումները հնարավորություն են տալիս առավել բազմակողմանի ուսումնասիրել խնդիրները և դրանց լուծմանը գնալ բոլոր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից ձևավորված թիմով: